# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 9 - 10 (16710) ՇԱԲԱԹ 2 ՓԵՏՐՎԱՐԻ 2019 Թ. ԳԻՆԸ` 40 ԹԵԹՐԻ

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

## ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵ. «ՎՐԱՍՏԱՆՆ ԱՆՊԱՅՄԱՆ ԿԴԱՌՆԱ ՏՆՏԵՍԱՊԵՍ ԶԱՐԳԱՑԱԾ ԵՐԿԻՐ»




*Հունվարի 29-30-ը Թբիլիսիում անցկացվեց «Վրաստանը եւ աշխարհը 2019» խորհրդաժողով, որին մասնակցում էին տարբեր երկրների շուրջ հազար պատվիրակներ, այդ թվում` Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ: Խորհրդաժողովի պատվավոր հյուրն էր եվրահանձնաժողովի տրանսպորտի հարցով գլխավոր տնօրինության գործադիր տնօրեն Հենրիխ Գոլոլեյը: Միջոցառումը բացեց Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն:*

Իր խոսքում վարչապետը հայտարարեց, որ իր գլխավորած կառավարության բացարձակ առաջնահերթությունը տնտեսագիտության զարգացման եւ մարդկային կապիտալի զարգացման վրա հիմնված առաջընթացն է: Նրա խոսքով, Վրաստանը երբեք չի կարող հայտնվել տնտեսապես զարգացած երկրների թվում, եթե մասնաբային ներդրումներ չիրականացվեն կրթության ոլորտում:

- Մեզ համար, որպես երկիր, գլխավոր ակտիվը մեր հասարա-

(Շարունակությունը` 2-րդ էջում)

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

## ՎՐԱՍՏԱՆԸ ԱՌԱՋԱՐԿԵԼ Է ՆՈՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ` ՈՒՂՂՎԱԾ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼ ՄԵՐՁԵՑՄԱՆԸ

*Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին իր առաջին պաշտոնական այցով գտնվում էր Բրյուսելում, որտեղ հանդիպումներ ունեցավ Եվրամիության եւ Հյուսիսատլանտյան այլանսի ղեկավարների հետ:*



Հանրագումարելով Բրյուսել կատարած այցի կայացած հանդիպումների արդյունքները` Վրաստանի նախագահը հայտարարեց, որ Վրաստանը պատրաստ է Եվրամիությանը ներկայացնել նոր նախաձեռնություն:

- Սույն նախաձեռնության գլխավոր գաղափարն այն է, որ Վրաստանը կարող է դառնալ Եվրամիության անդամ` չկոչվելով նրա անդամ: Մենք արդեն ձեւակերպել ենք տրանսպորտային համաձայնագրեր, ծրագրեր, մասնավորապես` Erasmus

(Շարունակությունը` 2-րդ էջում)

ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ

## ԲԵՏՈՆԱՊԱՏՎԱԾ ԱԴԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՆՈՐ ԹԱՏՐՈՆԻ ՀԻՄՔՈՒՄ ԴՐՎԵՑ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՈՎԱՆԴԱԿՈՂ ՊԱՐԿՈՒՃԸ

*Հունվարի 29-ին, Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանի, թատերախմբի դերասանների ներկայությամբ, տեղի ունեցավ մշակույթի օջախի հին շենքի տեղում կառուցվող նոր թատրոնի հիմնակերքի բետոնապատման եւ հիմնակերքում թատրոնի կոլեկտիվի ստորագրությամբ փաստաթղթով պարկուճի տեղադրման արարողությունը:*





Տարիներ շարունակ վթարային վիճակում գտնվող, 1936 թվականին կառուցված թատրոնի շենքը, նախնական հետազոտությամբ, պետք է վերանորոգվեր, թեպետ Վրաստանի սեյսմիկ կենտրոնի որոշմամբ հաստատվեց, որ շենքը վերանորոգման ենթակա չէ: Այդ ժամանակ, Վրաստանի նախկին վարչապետ, «Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստան» կուսակցության հիմնադիր եւ նախագահ Բիձինա Իվանիշվիլու գլխավորած «Քարթու» հիմնադրամի նախաձեռնությամբ եւ ֆինանսական աջակցությամբ որոշում ընդունվեց նույն տեղում կառուցել արդիական թատրոնի շենք:

Եվ ահա, հունվարի 29-ին տեղի ունեցած միջոցառումը հենց այդ նոր շենքի շինարարության մեկնարկի խորհրդանշական վավերացումն էր:

Ինչպես տեղեկացրին շինարարությունն իրականացնող ընկերությունից, արդեն 2019 թվականի դեկտեմբերի համար շենքի շինարարությունը կավարտվի, իսկ ներքին հարդարանքների ու երեսապատման աշխատանքները կավարտվեն, եւ շենքը շահագործման կհանձնվի մեկ տարի անց` 2020 թվականի դեկտեմբերին:

ՀԱՅԱՍՏԱՆ

## ԱՆՑԿԱՑՎԵՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

*Հունվարի 30-ին Հայաստանի նախագահական նստավայրում, Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանի ներկայությամբ, տեղի ունեցավ Հայաստանի կառավարության անդամների երդման արարողությունը:*



Առաջինն ամբիոնին մոտեցավ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը` ընթերցելով երդման տեքստը.

«Հանուն համազգային նպատակների իրականացման եւ հայրենիքի հզորացման, երդվում եմ. բարեխղճորեն կատարել ժողովրդի առջեւ ունեցած պարտավորություններս, պահպանել Հայաստանի Հանրապետության սահմանադրությունն ու օրենքները, նպաստել Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության եւ շահերի պահպանմանը, հավատարիմ մնալ կառավարության անդամի բարձր կոչմանը»:

Ապա հերթով երդվեցին կառավարության մյուս անդամները:

Երդման արարողության ավարտին, Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը շնորհավորեց վարչապետին եւ կառավարության անդամներին:

(Շարունակությունը` 7-րդ էջում)

ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿ - 27

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆՇԵՑ ԵՐԿՐԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ 27-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

### ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ` ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՄԱՐ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

*Հունվարի 28-ին, Հայաստանի Զինված ուժերի կազմավորման 27-րդ տարեդարձի կապակցությամբ, Հայաստանի եւ Արցախի բարձրագույն ղեկավարություններն այցելեցին «Եռաբլուր»` հարգանքի տուրք մատուցելու իրենց կյանքը Հայրենիքի անկախության համար զոհաբերած հայորդիների հիշատակին:*

«Եռաբլուր» պանթեոն այցելեցին Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը, վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Արցախի նախագահ Բակո Սահակյանը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը, Հայաստանի ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանը, պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանը, բարձրաստիճան այլ պաշտոնյաներ:

(Շարունակությունը` 7-րդ էջում)

## ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ` ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 27-ԱՄՅԱԿԻՆ

*Հունվարի 28-ին Վրաստանում Հայաստանի դեսպանությունը Հայաստանի Զինված ուժերի կազմավորման 27-ամյակի առթիվ Թբիլիսիում կազմակերպեց պաշտոնական ընդունելություն:*



Ընդունելությանը ներկա էին Վրաստանի պաշտպանության նախարար Լեւան Իզորիան, նախարարի առաջին տեղակալ Լելա Չիքովանին, Զինված ուժերի Գլխավոր շտաբի պետ, գեներալ-մայոր Վլադիմեր Չաչիբաիան, Հայաստանի պաշտպանության նախարարի խորհրդական, գեներալ-լեյտենանտ Էնրիկո Ապրիամովը, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական եւ ռազմադիվանագիտական

(Շարունակությունը` 2-րդ էջում)

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

# ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵ. «ՎՐԱՍՏԱՆՆ ԱՆՊԱՅՄԱՆ ԿԴԱՌՆԱ ՏՆՏԵՍԱՊԵՍ ԶԱՐԳԱՑԱԾ ԵՐԿԻՐ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կայնությունն է, ժողովուրդը: Բազմիցս ընդգծել եմ, որ այն տնտեսական քաղաքականությունը, որը մենք իրականացնում ենք, թույլ կտա կրճատել աղքատությունը, սակայն մենք երբեք չենք կարողանա Վրաստանը դարձնել զարգացած տնտեսությամբ երկիր, եթե խոշոր ներդրումներ չկատարվեն կրթության ոլորտում, եթե մենք չկարողանանք ողջ էկոնոմիկայում ներդնել կրթության ոլորտը: Եթե դա մեզ հաջողվի, ապա դա կդառնա միակ անտարակուսելի նախապայմանը, որ Վրաստանն անպայման կանգնի տնտեսապես զարգացած երկրների շարքը: Ես բազմիցս նշել եմ, որ դա կազմելու է ՀՆԱ-ի առնվազն 10-11 տոկոսը, որը ամեն տարի պետք է հատկացվի պետական եւ մասնավոր հատվածի կողմից կրթական ոլորտի համար: Հենց դա մեզ կբերի հաջողություն, որի մասին երազում ենք,- հայտարարեց Բախտաձեն:

Իր խոսքում հիշեցնելով, որ Վրաստանի տարածքով տարանցիկ փոխանցումներ է իրականացնում ծով սեփական ելք չունեցող 8 երկիր, Վրաստանի վարչապետը նշեց, որ դա վիթխարի ներուժ է, միաժամանակ նաեւ մեծ պատասխանատվություն:

- Հենց այդ պատճառով, վերջին տարիների ընթացքում մենք ենթակառույցների ոլորտում նշանակալիորեն ավելացրինք ներդրումները: Մենք ձգտում ենք, որպեսզի ունենանք համապատասխան ենթակառույցներ, խորջրյա նավահանգիստներ եւ, որքան հնարավոր է, այդ ամենին հասնենք կարճ ժամանակահատվածում,- հայտարարեց Բախտաձեն:

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

# ՎՐԱՍՏԱՆԸ ԱՌԱՋԱՐԿԵԼ Է ՆՈՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ՝ ՈՒՂՂՎԱԾ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼ ՄԵՐՁԵՑՄԱՆԸ



(Սկիզբը՝ 1-ին էջում)

ծրագիրը, որը լայն ճանաչման է արժանացել մեր ուսանողների շրջանում: Մենք պետք է լավ մտածենք եւ ներկայացնենք առաջարկությունների կոնկրետ ցուցակը, որտեղ ներկայացվելու են մեր շահերը,- հայտարարեց Վրաստանի նախագահը:

Լրագրողի հարցին, թե Վրաստանն ինչո՞վ կարող է գրավել Եվրամիությանը, Սալոմե Զուրաբիշվիլին ասաց, որ Վրաստանն այս բարդ տարածաշրջանում կայունության կղզի է:

- Դա այդպես է, չնայած բռնազավթված տարածքների եւ Ռուսաստանի ագրեսիվ խաղերին, որը շարունակում է ճնշում գործադրել մեզ վրա, Վրաստանը շարունակում է մնալ Եվրամիության մոտ հարեւանության կայունության խարիսխ: Այսօր մենք տեսնում ենք, որ Հայաստանն էլ օգտագործում է վրացական փորձը Եվրամիությանը մերձենալու համար: Երեւանը այդ ուղին անցնում է մեզանից հետո: Դա ցույց է տալիս, որ Վրաստանը մենակ չէ: Ադրբեջանը եւս շահագրգռված է Եվրամիության հետ հարաբերություններում,- ընդգծեց Զուրաբիշվիլին:

Լրագրողների հետ հանդիպմանը, Վրաստանի նախագահը անդրադարձավ նաեւ Ռուսաստանի հետ հարաբերությունների հարցին՝ նշելով, որ Ռուսաստանի հետ երկխոսությունն անթույլատրելի է, քանի դեռ Վրաստանի տարածքները բռնազավթված են:

ՆԻՆՈԾՄԻՆԴԱ

# ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ «ԳՅՈՒՂԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ» ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

***Նինոծմինդայի մունիցիպալիտետի գյուղերում բնակչության հետ խորհրդատվություններ եւ գյուղական ժողովներ են անցկացվում «Գյուղի աջակցության ծրագրով» առավել առաջնահերթային հարցերի հստակեցման համար:***

Մունիցիպալիտետի ղեկավարների կազմով աշխատանքային խումբը, որի կազմում են Նինոծմինդայի քաղաքապետ Անի Մոսոյանը, սակրեբուլոյի նախագահ Սմբատ Կյուրեղյանը, փոխքաղաքապետեր Արտավազդ Տոնոյանը, Ալեքսանդր Միքելաձեն եւ քաղաքապետարանի ենթակառույցների ծառայության ղեկավար Ռուբեն Ղազարյանը վերոնշյալ ծրագրի շրջանակներում, հանդիպումներ են ունենում մունիցիպալիտետի գյուղերի բնակիչների հետ, մասնակցում հարցի քննարկումներին: Այսպես, մունիցիպալիտետի Գորելովկա, Ժդանովական, Եֆրեմովկա, Սպասովկա, Օռլովկա եւ Սամեբա գյուղերում անցկացված հավաքին, բնակիչները՝ քվեարկությամբ, որոշեցին ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող նախագծերից առաջնայինը:

Գորելովկայի եւ Սամեբայի, ինչպես նաեւ Օռլովկայի ու Սպասովկայի (համատեղ նախագիծ) բնակչությունը գերադասությունը հանձնեց խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգման ծրագրին, Ժդանովականի մարդիկ՝ անասուններին ջրով ապահովելուն ուղղած նախագծին, իսկ Եֆրեմովկայի բնակիչների համար առաջնայինը «Հասարակական տան» համար գույքի ձեռքբերումն էր:

Բոլոր հանդիպումներին մասնակցում է նաեւ Ախալքալաքիից եւ Նինոծմինդայից Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Հենզել Մկոյանը:

ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿ - 27

# ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 27-ԱՄՅԱԿԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կորպուսի ներկայացուցիչներ, ռազմական փորձագետներ, Վրաստանի խորհրդարանի պատգամավորներ, վիրահայ համայնքային կառույցների մի շարք ներկայացուցիչներ:

Ողջույնի իր խոսքում, Վրաստանում ՀՀ ռազմական կցորդ, գնդապետ Տիգրան Հովհաննիսյանն անդրադարձ կատարեց օրվա խորհրդին ու հայոց Զինուժի դերին ու նշանակությանը, ինչպես նաեւ խոսեց Հայոց բանակի կազմավորման գործընթացի եւ դրա անցած ուղու մասին:

Վրաստանի պաշտպանության նախարար Լեւան Իզորիան իր ելույթում ընդգծեց հայ եւ վրաց ժողովուրդների միջեւ պատմականորեն ձեւավորված փոխգործակցության կարեւորությունը՝ շեշտելով ռազմական համագործակցության զարգացման անհրաժեշտությունը՝ ի շահ երկու երկրների ու տարածաշրջանային անվտանգության:

Նախարարը, անդրադառնալով հայ-վրացական բարեկամությանը, մատնանշեց, որ Հայաստանը մշտապես դիտարկվում է որպես բարեկամ երկիր:

Վրաստանում Հայաստանի դեսպան Ռուբեն Սադոյանն իր ելույթում ընդգծեց այն կարեւոր դերակատարությունը, որն իրականացնում են Հայաստանի Զինված ուժերը երկրի անվտանգության պահպանման գործում:

Հայաստանի պաշտպանության նախարարի խորհրդական, ծնունդով թբիլիսցի Էնրիկո Ապրիամովը գրագետ ու գեղեցիկ վրացերենով ներկաներին դիմեց դարերի պատմություն ունեցող հայ-վրացական զինակցության մասին:

# ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ՏՐՎԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 27-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԸ

***Արդեն 27 տարի է, ինչ Թբիլիսիում կազմակերպվում են Հայոց բանակին նվիրված միջոցառումներ:***



Հունվարի 28-ին Հայաստանի Զինված ուժերի կազմավորման 27-ամյակի կապակցությամբ, Վրաստանում Հայաստանի դեսպանությունը, Վիրահայոց թեմի հոգեւոր դասի եւ թբիլիսահայ համայնքի ներկայացուցիչների մասնակցությամբ, հարգանքի տուրք մատուցեց Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցու բակում ամփոփված փառապանծ հայազգի զորավարներ, գեներալներ Միխայիլ Լորիս-Մելիքովի, Իվան Լազարեւի, Բորիս Շելկովնիկովի, Արզաս Տեր-Ղուկասովի հիշատակին: Կատարվեց հոգեհանգստյան կարգ, որին ներկա էր Հայաստանի պաշտպանության նախարարի խորհրդական, գեներալ-լեյտենանտ Էնրիկո Ապրիամովը:

Իր խոսքում, Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Սադոյանը, անդրադառնալով տոնի խորհրդին, նշեց, որ Հայոց բանակը կազմավորվելով դժվարին ժամանակաշրջանում, անցավ փառավոր ուղի եւ այժմ համարվում է տարածաշրջանի ամենամարտունակ բանակներից մեկը:



## ՎԵՆԵՍՈՒԵԼԱ
## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

*Ինչպես արդեն հաղորդել ենք, Վենեսուելայում երկրի նախագահ Նիկոլաս Մադուրոյի երկրորդ անգամ երդմնակալությունից հետո սկսած քաղաքացիական դիմակայությունը շարունակվում է: Դեռեւս հունվարի 23-ին Վենեսուելայի ընդդիմադիր Ազգային ասամբլեայի (միապալատ խորհրդարանի) խոսնակ Խուան Գուայդոն իրեն հայտարարել էր երկրի նախագահի պաշտոնակատար: Քաղաքական գործչին արդեն Վենեսուելայի ժամանակավոր ղեկավար են ճանաչել ԱՄՆ-ը, Կանադան, Արգենտինան, Ավստրալիան, Իսրայելը, Վրաստանը, Բրազիլիան, Չիլին, Կոլումբիան, Պարագվայը, Պերուն, Եվրամիության մի քանի երկրներ, այլ պետություններ, ինչպես նաեւ Ամերիկյան պետությունների կազմակերպությունը:*

*Նախագահ Նիկոլաս Մադուրոն դա որակել է Վաշինգտոնի կազմակերպած պետական հեղաշրջում եւ հայտարարել ԱՄՆ-ի հետ դիվանագիտական հարաբերությունները խզելու մասին: Հաջակցություն Մադուրոյի, հանդես են եկել Ռուսաստանը, Բելառուսը, Բոլիվիան, Իրանը, Կուբան, Նիկարագուան, Սալվադորը եւ Թուրքիան:*

*Մեքսիկան եւ Ուրուգվայը դեմ են արտահայտվել արտաքին միջամտությանը եւ միջնորդություն են առաջարկել հանրապետության ընդդիմության ու կառավարության միջեւ բանակցությունների կազմակերպման հարցում:*

## ԱՄՆ-ՉԻՆԱՍՏԱՆ
## ԱՌԱՋԸՆԹԱՑ՝ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

*Հունվարի 31-ին Վաշինգտոնում ավարտվել է ԱՄՆ-ի եւ Չինաստանի միջեւ առեւտրական կոնսուլտացիաների նոր փուլը, որն սկսվել էր հունվարի 30-ին: Երկու երկրները առաջընթացի են հասել երկկողմ առեւտրի բնագավառում հաշվեկշռի վերականգնման, տեխնոլոգիաների արտահանման եւ մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության հարցում: Սպիտակ տանը ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի հետ առեւտրական բանակցությունների արդյունքներին նվիրված հանդիպմանն այս մասին հայտարարել է Չինաստանի պատվիրակության ղեկավար, ՉԺՀ Պետխորհրդի փոխվարչապետ Լյու Հեն:*

## ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ
## 150 ՀԱԶԱՐ ՄԻԳՐԱՆՏ՝ ՄԻԱՅՆ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ

*2018 թվականին մոտավորապես 150 հազար միգրանտ է ժամանել Եվրամիության երկրներ, ինչը մեկ քառորդով պակաս է 2017 թվականի ցուցանիշի համեմատ: Դա ամենացածր մակարդակն է վերջին հինգ տարվա ընթացքում: Ընդ որում, 2018 թվականի ցուցանիշը 92 տոկոսով ցածր է միգրացիոն հոսքի այն բարձրակետից, որը 2015 թվականին դիտվել է ճգնաժամային:*

## ԲՐԱԶԻԼԻԱ
## ԶՈՀԵՐ՝ ԱՄԲԱՐՏԱԿԻ ՃԵՂՔՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

*Ամբարտակի ճեղքման հետեւանքով, որն անցյալ շաբաթ տեղի է ունեցել Բրազիլիայի հարավ-արեւելքում, զոհվածների թիվը հասել է 110-ի:*

*Ամբարտակի ճեղքումը տեղի է ունեցել հունվարի 25-ին: Ամբարտակը պահում էր մետաղագործական արդյունաբերության թափոններով ջուրը: Կառույցը պատկանում է Բրազիլիայի Vale հանքարդյունահանող ընկերությանը: Ամբարտակի ճեղքումից հետո, կառավարությունը 1,3 միլիարդ դոլար է սառեցրել Vale-ի հաշիվներում, գումարը կուղղորդվեն տուժածների օգնությանը:*

## Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

# ԳԼԽԱՎՈՐ ՆՊԱՏԱԿԸ՝ ԲՈԼՈՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃՆ Է

***Հունվարի 31-ին Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն մասնակցեց տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարարության կողմից ներկայացված նախագծերի շնորհանդեսին:***

Հանդես գալով միջոցառմանը՝ վարչապետը նշեց, որ ուժեղ տարածաշրջանները պայմանավորում են ուժեղ Վրաստանը:

- Մեր խնդիրն է՝ 2022 թվականը ներառյալ, կարողանանք իրականացնել բոլոր ենթակառույցային խոշոր նախագծերը,- հայտարարեց վարչապետն ու հավելեց, որ կարեւոր նշանակություն ունի այն, որ յուրաքանչյուր տարածարջան զարգանա հավասարապես եւ, որպեսզի բոլոր տարածաշրջաններում ենթակառույցների ու սպասարկումների մատչելիությունը լինի առնվազն նույն որակի ու մակարդակի, ինչպիսին հաստատված է խոշոր քաղաքներում:

- Մեր քաղաքական թիմի համար տարածաշրջանային զարգացումը միշտ եղել է առաջնային, եւ դա բոլորից լավ արտահայտվել է բյուջեի թվերում ու պարամետրերում: Փաստորեն, 2012 թվականի համեմատ, մենք այդ ուղղությամբ բյուջեն եռապատկել ենք, իսկ նախորդ տարվա համեմատ, 2019 թվականի բյուջեն տարածաշրջանների համար ավելացվել է 20 տոկոսով, 2019 թվականին ենթակառույցների զարգացման համար այն կկազմի շուրջ 2 միլիարդ լարի: Տարածաշրջանային ենթակառույցների յուրաքանչյուր լրացուցիչ ներդրումը նշանակում է լրացուցիչ հնարավորություն քաղաքացիների համար: Մեր տնտեսական քաղաքականության գլխավոր խնդիրը առաջընթացն է, տնտեսական աճի այնպիսի ապահովումը, որը կանդրադառնա յուրաքանչյուր քաղաքացու վրա: Դրան հնարավոր է հասնել միայն ճիշտ, հավասարակշռված տարածաշրջանային զարգացմամբ,- հայտարարեց վարչապետը:

Մամուկա Բախտաձեն հավաստիացրեց, որ Վրաստանում ենթակառույցների զարգացումը կլինի կառավարության բացարձակ առաջնահերթությունը ինչպես 2019 թվականին, այնպես էլ՝ հաջորդ տարիներին:

ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՈՒՄ

# ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԱՎԵԼԻ ՔԱՆ 1200 ԾՐԱԳԻՐ



***Տարածքային զարգացման եւ ենթակառուցվածքների նախարար Մայա Ցքիտիշվիլու հայտարարությամբ, 2018 թվականին նախարարության եւ նախարարության կազմի մեջ գտնվող գերատեսչությունների կողմից ենթակառուցվաքային ծրագրերի իրականացման համար ծախսվել է 1 միլիարդ 661 միլիոն լարի:***

Նախարարի խոսքով, 2018 թվականին, ընդհանուր առմամբ, 1200-ից ավելի ծրագիր է իրականացվել:

- 2018 թվականին, իսկապես, շատ ծրագրեր ենք իրականացրել, 1200-ից ավելի, որոնք, առաջին հերթին, վերաբերում են մեր տարածաշրջաններին: Դրանցից կառանձնացնեի կարեւոր եւ պատմական ծրագրերը, որոնց մասշտաբը, իհարկե, տարբերվում է բոլոր այն ծրագրերից, որոնք իրականացվել են անկախ Վրաստանում: Դրանց թվում է ամենաերկար կամուրջը, որը 1 կմ-ից ավելի երկարություն ունի, իսկ թունելն ունի 2 կմ-ից ավելի երկարություն: Գիտեք, որ շատ էր խոսվում 2018 թվականին իրականացված ծրագրերի տեմպի, որակի եւ բյուջեի հետ չհամապատասխանելու մասին, սակայն, ցանկանում եմ իրականությունը տեսնել, որ մենք, ընդանուր առմամբ, 1 միլիարդ 661 միլիոն լարի ենք ծախսել: Սա նշանակում է, որ այս ներդրումներն արվել են տարածաշրջանների զարգացման եւ այնտեղ բնակվող մարդկանց բարեկեցության համար,- հայտարարեց Մայա Ցքիտիշվիլին:

ՎՐԱՍՏԱՆ - ՌՈՒՍԱՍՏԱՆ

# 10 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ 2006 ԹՎԱԿԱՆԻՆ ՎՏԱՐՎԱԾ ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ



Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) Մեծ պալատը հունվարի 31-ին Ռուսաստանին պարտավորեցրել է 10 մլն եվրոյի չափով փոխհատուցում վճարել Վրաստանի այն քաղաքացիներին, որոնց Ռուսաստանից վտարել են 2006 թվականի աշնանը: Այդ մասին ասված է ՄԻԵԴ-ի հաղորդագրության մեջ, որը հրապարակված է դատարանի կայքում:

Վրաստանի 1,5 հազար քաղաքացիներ դրամական փոխհատուցում կստանան Ռուսաստանից նրանց արտաքսումից տասներեք տարի անց:

Ստրասբուրգի դատարանի Մեծ պալատի որոշումը վերջնական է եւ ենթակա չէ բողոքարկման: Դրա կատարմանը հետեւում է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն: Ռուսաստանի դեմ Վրաստանի միջպետական հայցի վերաբերյալ Ստրասբուրգի դատարանի Մեծ պալատը որոշում էր ընդունել տակավին 2014 թվականի հուլիսին:

Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին նշեց, որ Ստրասբուրգի դատարանի վերին պալատը՝ 16 կողմ եւ 1 դեմ ձայնով, գործով «Վրաստանը Ռուսաստանի դեմ» որոշումը կայացրել է հօգուտ Վրաստանի:

- Այս գործը ուներ երկու փուլ: Առաջինը, 2014 թվականին գործը քննելուց հետո, ավարտվել է Վրաստանի հաղթանակով, իսկ երկրորդ փուլը, այսօրվա որոշմամբ: Տվյալ վճիռով, Վրաստանի պետությունը երեք ամսվա ընթացքում, Ռուսաստանի Դաշնությունից ոչ նյութական վնասի համար պետք է ստանա 10 միլիոն եվրո, որը փոխանցվելու է



տուժածներին,- հայտարարեց Թեա Ծուլուկիանին:

Մեկնաբանելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումը՝ հաշտեցման եւ քաղաքացիական հավասարության հարցերով պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին, նշեց, որ սա Վրաստանի քաղաքացիների հաղթանակն է:



## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ԿԱԶՄԵԼ Է 4,5 ՏՈԿՈՍ

*Վրաստանի ազգային վիճակագրական ծառայության նախնական գնահատականների համաձայն, 2018 թվականի դեկտեմբերին, նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ, ՀՆԱ-ի իրական աճը կազմել է 5,6 տոկոս: Իսկ 2018 թվականին տնտեսության իրական աճը որոշվել է 4,8 տոկոսով:*

*Վիճակագրության համաձայն, 2018 թ. դեկտեմբերին, նախորդ տարվա սույն ժամանակահատվածի համեմատ, աճ է նկատվել վերամշակող արդյունաբերության, շինարարության, հյուրանոցների եւ ռեստորանների, ինչպես նաեւ անշարժ գույքի գործառնությունների եւ սպառողական ծառայությունների ոլորտում:*

*Ինչ վերաբերում է նվազեցմանը, ապա այն ֆիքսվում է էլեկտրաէներգիայի, գազի եւ ջրի արտադրության ու բաշխման, ինչպես նաեւ տրանսպորտի եւ ֆինանսական գործունեության ոլորտներում:*

## ՄԻԽԵԻԼ ԴԻԼԻՄԱՇՎԻԼԻՆ՝ ՊԱՐԵԿԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ

*Վրաստանի ՆԳՆ պարեկային ոստիկանության դեպարտամենտի պետ է նշանակվել Միխեիլ Դիլիմաշվիլին, ով մինչ այդ զբաղեցնում էր Աջարիայի պարեկային ոստիկանության գլխավոր վարչության պետի պաշտոնը:*

*Ինչպես տեղեկացրել են Վրաստանի ՆԳ նախարարությունից, պարեկային ոստիկանության դեպարտամենտի նախկին պետ Թեմուր Կուպատաձեն նշանակվել է սահմանային պաշտպանության բաժնի վարչության փոխտնօրեն:*

## ՎՐԱՍՏԱՆԸ ԱՐԴԻԱԿԱՆՑՆՈՒՄ Է ՈՒՂՂԱԹԻՌՆԵՐԸ

*Վրաստանի պաշտպանության նախարարությունը ծեռնամուխ է եղել «Իրոկեզ» տեսակի ՍՀ-1 բազմանպատակային ուղղաթիռների վերանորոգմանը, ինչի համար ծախսվելու է 23 միլիոն լարի: Այդ մասին հայտնել է հանրապետության պաշտպանության նախարար Լեւան Իզորիան:*

*Վրաստանի զինված ուժերն ունեն ընդամենը 13 «Իրոկեզ»:*

*Բացի ամերիկյան «Իրոկեզ»-ներից, Վրաստանի սպառազինության մեջ կան Մի-2, Մի-8 եւ Մի-24 տեսակի ուղղաթիռներ:*

ԴՊՐՈՑ

# ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՎԵՐԱՑՎԵՑԻՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

***Երեկ՝ փետրվարի 1-ին, Վրաստանի կառավարության նիստին նախորդող ավանդական ճեպասուլիսում, վարչապետ Մամուկա Բախտաձեն հանդես եկավ հայտարարությամբ.***

***- Որոշում ընդունեցի, որ այս տարի դպրոցներում ավարտական քննությունները կվերացվեն ինչպես 11-րդ, այնպես էլ՝ 12-րդ դասարանների աշակերտների համար:***

***Ինչպես նշեց կառավարության ղեկավարը, կրթության նախարարությունն ընդունեց 2019 թվականին 11-րդ դասարանցիների համար, իսկ 2020 թականին 11-րդ եւ 12-րդ դասարանների աշակերտների ատեստատի քննությունների վերացման մասին որոշում: Մամուկա Բախտաձեի խոսքով, դա սկզբունքորեն ճիշտ մոտեցում էր, թեպետ այդ հարցի կապակցությամբ ոլորտի մասնագետների հետ ինտենսիվ խորհրդատվությունների արդյունքում որոշվեց ավարտական երկու դասարանների համար այն վերացնել:***

Երկրի վարչահետի այս որոշումը եւս մեկ ապացույց է, որ Վրաստանի կրթական համակարգի բարեփոխումները ակտիվ փուլ են թեւակոխել: Փորձագետների ընդգրկմամբ, մշակվել է բարեփոխումների տաս փաթեթ, որը ներառում է ոլորտի բոլոր ուղղությունները: Դրանցից մեկը գնահատման նոր համակարգի ստեղծումն ու ներդրումն է:

Ընթացիկ ուստարում, միասնական ազգային քննությունների շրջանակներում, չի նախատեսվում փոփոխություն: Սակայն, 2020 թվականից բուհ ընդունվելու համար բոլոր դիմորդները քննություն կհանձնեն երեք պարտադիր առարկաներից. վրաց լեզու եւ գրականություն, օտար լեզու: Երրորդ պարտադիր առարկայի քննությունը կսահմանվի բարձրագույն հաստատության ծրագրերի հիման վրա. մաթեմատիկա՝ տեխնիկական, պատմություն՝ հումանիտար ուղղության դեպքում: Հատկանշական է, որ դիմորդներն, ինչպես նախկինում, առանց սահմանափակումների կկարողանան ընտրել թե' տեխնիկական, թե' հումանիտար ծրագրեր: Համալսարաններին հնարավորություն է տրվում ավելացնելու նաեւ կամընտրական ծրագրի քննություն, այդ թվում՝ ընդհանուր ունակությունից: Հավելենք, որ բուհերը, ելնելով ծրագրերի առաջնահերթությունից, իրավունք կունենան սահմանել յուրաքանչյուր առարկայից հաղթահարվելիք նվազագույն շեմը: Քննությունները նույն կերպ՝ կենտրոնացված ձեւով կանցկացվեն Գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնի կողմից, կփոխվի դրամաշնորհային ֆինանսավորման կարգը՝ հաշվի կառնվի պարտադիր առարկաների նոր ցանկը:

Նախարարությունը կշարունակի գործակցել համալսարանների ու շահագրգիռ կողմերի հետ, որպեսզի առաջարկված մոդելը եւ քննական համակարգը առավելագույնս լինեն արդարացի ու որակյալ:

***ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ***

***Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության փորձագետ***

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

# ՆԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԸ՝ ԾԱՆՈԹ ԴԵՄՔ «ՄՈԱՄԲԵ»-ԻՑ

*Մոտ մեկ տարի է, ինչ Վրաստանի հանրային հեռուստաընկերության «Բազմերանգ Վրաստան» նախագծի շնորհիվ, համացանցով, հնարավոր է դարձել հայերեն հաղորդումների դիտումը: Երիտասարդական, համայնքային, մանկական հաղորդումների հեռարձակումն ու նաեւ «Մոամբե» գլխավոր լրատվական թողարկման համաժամանակյա թարգմանությունն իրականացվում է 1TV.GE/AM վեբ հարթակում, ինչպես նաեւ Առաջին ալիքի ֆեյսբուքյան էջում: Դեռ նոր կոփվող լրագրողները մայրաքաղաքի վրացական բուհերում սովորող հայազգի վրաստանցիներ են, մեծ մասամբ՝ տարածաշրջաններից: Նրանց շարքում առաջիններից մեկը Ախալցիխեից Նանա Հակոբյանն էր: Այսօր Նանան Թբիլիսիի Իլիայի համալսարանի Սոցիոլոգիայի ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողուհի է, հարթակի լրագրողներից է ու կայքով հեռարձակվող «Մոամբե»-ի հաղորդավարներից մեկը, ինչպես նաեւ «Գանձարան» հեղինակային հաղորդման վարողը:*

*Մեր հարցազրույցը Նանայի հետ կայացավ հենց քննական բուռն շրջանում: Հինգից երեք քննությունն արդեն հանձնել էր ու պատրաստվում էր հաջորդին:*

***- Նանա, մի փոքր առաջ անցնելով, հարցնեմ, թե արդյոք դժվար չէ՞ համատեղել ուսումն ու աշխատանքը:***

- Եթե ունես անհագուրդ ցանկություն ու կամք, ապա՝ ոչ: Այն, ինչ անում ես, սիրով պետք է անես, որպեսզի ստացվի: Պետք է ժամանակն ուղղակի ճիշտ օգտագործել, ծրագրել եւ միշտ նպատակ ունենալ: Բարեբախտաբար, այսօր բուհերն ընձեռում են դասախոսության ժամն ընտրելու հնարավորություն, հետեւաբար, ծրագրեր կազմելու գործընթացն այդքան էլ բարդ չէ, որքան առաջին հայացքից:

***- Երեւի այս հարցում քեզ օգնում է նաեւ ընտրածդ մասնագիտությունը՝ սոցիոլոգիան: Ի դեպ, ինչո՞ւ հենց այդ ճյուղը...***

- Սոցիոլոգիան ուսումնասիրում է հասարակությունը, մարդկանց փոխհարաբերությունները, նրանց մոտեցումներն ու նախասիրությունները: Ինձ միշտ հետաքրքրել է այդ ամենը, մարդկանց դիրքորոշումները տարբեր հարցերի շուրջ, այն, թե ինչպես են նրանք մոտենում այս կամ այն հարցին եւ ինչպիսի լուծում են տալիս: Սոցիոլոգիան մոտավորապես 25-30 տարվա պատմություն ունի Վրաստանում, եւ արդեն կենսական նշանակություն ունի երկրի եւ անհատի զարգացման ու առաջընթացի հարցում:

***- Ախալցիխեի թիվ 3 հայկական դպրոցի սաներից ես, կրթօջախ, որ անուն հանած իր շրջանավարտներով է հայտնի ու այսօր էլ աշակերտների ամենամեծ թվով հայկական դպրոցներից մեկն է երկրում: Ինչպե՞ս ես հիշում քո դպրոցը:***

- Նախ շատ ուրախ եմ, որ հայկական կրթություն ունեմ, քանի որ կարծում եմ՝ ամեն մարդ, եթե իհարկե ունի այդ հնարավորությունը, անպայման պետք է ձգտի սովորել իր մայրենի լեզուն: Ես Հայաստանում եմ ծնվել, Կոտայքի մարզի Եղվարդ քաղաքում: Հայրս իրավաբան է, ծնվել ու մեծացել է Արեւմտյան Վրաստանի մի շատ գեղեցիկ անկյունում՝ Բաղդաթիում: Մայրս մանկավարժ է, ամուսնացել եւ Հայաստանից տեղափոխվել է Ախալցիխե: Ախալցիխեն իմ առաջին քայլերն ու նվաճումները ձեւավորող քաղաքն է, իսկ դպրոցն այն դարբնոցը, որին պարտական կլինեմ միշտ: Բայց ես գտնում եմ, որ աշակերտն ինքը պետք է պրպրտող լինի: Դպրոցական տարիներից բավական ակտիվ եմ, մասնակցել եմ տարբեր դասընթացների, մրցույթների, թեեւ ամենաառանձնահատուկը FLEX - ապագա առաջնորդների փոխանակման ծրագրի շրջանավարտի կարգավիճակ ստանալն էր: Առաջին անգամ FLEX ծրագրի մասին տեղեկացա 10-րդ դասարանում: Որոշեցի մասնակցել: Երբ դիմեցի, չհաղթեցի, սակայն, բարեբախտաբար, չհուսահատվեցի, որոշեցի կրկին փորձել եւ այս անգամ արդեն ծրագրի հաղթող ճանաչվեցի: Որպես FLEX-ի հաղթող՝ 12-րդ դասարանի ուսումնական տարին անցկացրի Ամերիկայի Միացյալ Նահանգներում, մի ամերիկյան ընտանիքում, սովորեցի Կալիֆոռնիա նահանգի Քինգսբուրգի ավագ դպրոցում:

***- Որքան գիտեմ, վերադարձել ես մայիսին եւ անմիջապես հանձնել ընդունելության քննությունները, այո՞...***

- Այո: «1+4» ծրագրի շրջանակներում ընդունվեցի Թբիլիսիի Իլիայի պետական համալսարան:

***- Իսկ ի՞նչ ես կարծում, որքանո՞վ է արդյունավետ «1+4»-ը:***

- «1+4» ծրագիրը շատ կարեւոր դեր է կատարում Վրաստանում ապրող ազգային փոքրամասնությունների շրջանում: Եվ մանավանդ նրանց, ովքեր վրացական դպրոց չեն հաճախել եւ պետական լեզվի իմացությունը ցածր ցուցանիշ ունի: Այդուհանդերձ, կարծում եմ ծրագիրը որոշակի հավելումների կարիք ունի, որպեսզի ուսանողները ձեռք բերեն վրացերենի առավել լիարժեք իմացություն:

***- Պետական լեզվի տիրապետման քո մակարդակը ինչպիսի՞ն էր ու է:***

- Ես վրացերենին տիրապետում եմ մանկուց՝ օգնեց բակը, մանկապարտեզը: Հետո արդեն, իհարկե՝ դպրոցը, ուր վրացերենի ուսուցչուհիս մշտապես խնդրում էի դիմել կրթության նախարարություն դասագրքերն է՛լ ավելի հետաքրքիր դարձնելու համար: Այսօր ինձ օգնում է ոչ միայն համալսարանը, այլեւ միջավայրը, կենդանի շփումը:

***- Ի՞նչ է տալիս մարդուն պետական լեզվի իմացությունը:***

- Երկրի յուրաքանչյուր քաղաքացի, յուրաքանչյուր մարդ պետք է անպայման գիտենա երկրի պետական լեզուն, որտեղ ապրում է: Նախեւառաջ, դա հարգանքի նշան է տվյալ երկրի հանդեպ: Իսկ մյուս կարեւոր փաստն այն է, որ պետական լեզվի իմացությունը բացում է ինքնադրսեւորման, ինքնահաստատման եւ անձնական առաջընթացի բոլոր հնարավորությունները: Իմանալ քոնը եւ սովորել պետականը, նորը բնավ չի խանգարում, ընդհակառակը հնարավորություն է տալիս պահպանել քո ինքնությունը:

***- Կարո՞ղ եմ հեռուստատեսությունում հաջողությանդ գրավականը կապել պետական լեզվի իմացությանդ հետ:***

- Այո՛, ինչ խոսք: Ամենատարրականը՝ չես կարդա թափուր տեղի մասին հայտարարությունն ու չես մասնակցի աշխատանքի ընդունման մրցույթին:

***- Համաձայն եմ, բայց շատ կարեւոր է նաեւ հաջորդ փուլը՝ ընդունելության հարցազրույցը...***

- Իմ դեպքում այդպես էլ եղավ: Ինձ թափուր տեղի մասին հայտնեց վրացի դասախոսներիցս մեկը, որի խորհրդին հետեւելով՝ հայտ ներկայացրի ու հրավիրվեցի որոշիչ հարցազրույցի: Ինձ անմիջապես ընդունեցին աշխատանքի: Մեր խմբագրությունում մոտ տաս հոգի ենք: Նույնը՝ ադրբեջանականում: Ես լրագրող-հաղորդավար եմ եւ ունեմ իմ հեղինակային «Գանձարան» հաղորդումը, ուր հյուրընկալում եմ տեղի հայ համայնքի ճանաչված գործիչներին: Շնորհակալ եմ իմ երկրին նման հրաշալի հնարավորության համար: Այս աշխատանքը ոչ միայն մոտ է իմ մասնագիտությանը, այլեւ բազմակողմանի զարգացման հարուստ աղբյուր է:




***- Ե՞րբ եւ որտե՞ղ կարող են ձեզ դիտել:***

- 1tv.ge/am վեբ-հարթակը կամ Առաջին ալիքի ֆեյսբուքյան էջ՝ Առաջին ալիք. (პირველი არხი) այցելելիս: «Մոամբե» լրատվական թողարկումը հեռարձակվում է ժամը 19:00-ին, ժամը 21:00-ին իրականացվում է նաեւ «Մոամբե» գլխավոր լրատվական թողարկման համաժամանակյա թարգմանությունը: Բացի այդ, ունենք մի շարք հաղորդումներ՝ «Երիտասարդական օրագրեր» (երկուշաբթի, ժամը՝ 19:30), «Գունեղ աշխարհ» (հինգշաբթի՝ ժամը 20:00), «Գանձարան» (երեքշաբթի՝ ժամը 20:00):

***- Երեւի ուսման հետ համատեղելու իմ առաջին հարցն այս պահին պիտի հնչեր, բայց քանի որ պատասխանիդ մեջ նշում ես անհագուրդ ցանկության, կամքի եւ օրը ճիշտ ծրագրելու մասին, ավարտենք հարցազրույցը այդ երեք շարժիչ ուժերից բխածով. ի՞նչ նպատակ-անելիքներ ունես...***

- Ցանկանում եմ ուսումս շարունակել Հումբոլտի համալսարանում, որը գտնվում է Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինում, այն ամենախոշոր հետազոտական կենտրոններից մեկն է համարվում, ուր առավելագույնս զարգացած են այն ուղղությունները, որոնք հետաքրքրում են ինձ՝ որպես սոցիոլոգ: Սակայն, ունենալով պրպտուն ու հետաքրքրասեր խառնվածք, մեկ էլ տեսար մի նոր, առավել լավ նպատակ-ծրագիր մշակեմ... Կարծում եմ, որ երիտասարդը պետք է միշտ համարձակ լինի, օգտագործի իր բոլոր կարողություններն ու, ամենակարեւորը, կյանքի ընձեռած հնարավորությունները, դիմի ռիսկերի եւ ունենա ավելի լավը ստեղծելու ցանություն:

*ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ*

ՀԱՐՑՈՒՄ

# ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՄԻՏՈՒՄՆ ՈՒ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄՆՈՒՄ ԵՆ ԱՆՓՈՓՈԽ

*ԱՄՆ Ազգային դեմոկրատական ինստիտուտը (NDI) դեկտեմբերի 6-20-ը Վրաստանի բնակչության շրջանում անցկացրել է հարցում: Հարցմանը մասնակցել է 2 205 մարդ: Վիճակագրական անճշտությունը կազմում է 2,1 տոկոս:*

### ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՂՄՆԱԿԻՑ Է ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՆԱՏՕ-ԻՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆԸ

Վրաստանի բնակչության մեծամասնությունը շարունակում է պնդել, որ երկրի գլխավոր արտաքին քաղաքական թիրախները պետք է լինեն անդամակցությունը Եվրամիությանն (ԵՄ) ու Հյուսիսատլանտյան դաշինքին (ՆԱՏՕ):

ԱՄՆ-ի Ազգային ժողովրդավարական ինստիտուտի (NDI) անցկացրած վերջին հարցումների համաձայն, բնակիչների 78 տոկոսը կողմ է երկրի անդամակցությանը ԵՄ-ին, միայն 9 տոկոսն է դեմ արտահայտվել, 7-ը դժվարացել է պատասխանել: Հարցվածների 78 տոկոսի համոզմամբ, Վրաստանը պետք է անդամակցի ՆԱՏՕ-ին, սակայն 13 տոկոսի համար դա անընդունելի է, 9 տոկոսը դժվարացել է պատասխանել:

### ԳԼԽԱՎՈՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄՆ Է

Հարցման արդյունքներով, հարցման ենթարկվածների 51 տոկոսը ամենակարեւոր ազգային հարցը համարում է աշխատատեղերի ստեղծումը: Հարցին, թե ազգային ո՞ր հիմնախնդիրներն են նշանակալի ձեր եւ ձեր ընտանիքի անդամների համար, 51 տոկոսը նշել է զբաղվածությունը, 38 տոկոսը՝ աղքատությունը, 37 տոկոսը՝ գնաճն ու արժեզրկումը:

Նշենք, որ սկսած 2009 թվականից, հարցման արդյունքներով, ազգային հրատապ հիմնախնդիրների հերթականությունը գրեթե չի փոխվել: Ինչպես նախորդ հարցումներում, այս անգամ էլ առաջնահերթային են համարվել զբաղվածությունը, աղքատության հաղթահարումը, գնաճն ու արժեզրկումը: Ներկայիս հարցման տվյալներով, չորրորդ ազգային հիմնախնդիրը՝ 27 տոկոսի հավաստմամբ, տարածքային ամբողջականության հարցն է, 25 տոկոսը առաջնային է համարում կենսաթոշակը, իսկ 18 տոկոսի համար նշանակալիցը աշխատարձի հիմնախնդիրն է:

### ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔՈՎ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՊԵՏՔ Է ԸՆՏՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Ամերիկայի Միացյալ Նահանգների ազգային ժողովրդավարական ինստիտուտի՝ NDI-ի կողմից անցկացված հարցման արդյունքներով, հարցման ենթարկվածների 85 տոկոսը գտնում է, որ երկրի նախագահը պետք է ընտրվի անմիջականորեն ժողովրդի կողմից: 11 տոկոսը համարում է, որ նախագահին ընտրելու են ժողովրդի կողմից ընտրված ներկայացուցիչները, օրինակ, մունիցիպալիտետների սակրեբուլոների անդամները, խորհրդարանականները:

Հիշեցնենք, որ 2017 թվականին անցկացված նման հարցման արդյունքներով էլ ժողովրդի կողմից նախագահի ընտրության կողմնակից էր ճանաչվել 84 տոկոսը:

### ԵԹԵ ՎԱՂԸ ԱՆՑԿԱՑՆԵՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

NDI-ի հարցման արդյունքներով, եթե Վրաստանում անցկացնեն խորհրդարանական ընտրություններ, ապա հարցման ենթարկվածների 29 տոկոսը կքվեարկեր «Վրացական երազանքի» օգտին, 12 տոկոսը՝ «Ազգային շարժման»: Հատկանշական է, որ հարցման ենթարկվածների 26 տոկոսը այդ հարցի պատասխանը չի ունեցել, 13 տոկոսը հրաժարվել է պատասխանելուց: Բոլոր կուսակցությունների դեմ քվեարկելու ցանկություն է հայտնել հարցման ենթարկվածների 9 տոկոսը:

Ազգային ժողովրդավարական ինստիտուտի կողմից անցկացված հարցման արդյունքներով, հարցման ենթարկվածների 27 տոկոսը գտնում է, որ հայացքներով իրենց ավելի մոտ է «Վրացական երազանքը», 12 տոկոսը գերադասում են «Ազգային շարժմանը»: 36 տոկոսի համոզմամբ, կուսակցությունից եւ ոչ մեկը չի արտահայտում նրանց հայացքները: